

ՊԵՏԱԿԱՆ



ԹԱՏՐՈՆԻ

ԳՐԱԴԱՐԱՆ

I

ԲԱԺԱՆՆՄՈՒՆՔ

№ 1007

Յ Ե Ր Ե Գ Ա Ն

B-211

B-1061

ԶԱՏԿԱԿԱՆ ԳԱՌՆՈՒԿՆԵՐ

Կառակ. 1 դործ. հեղ. Գ. Մարգո. Քարզմ. Լ. Բարայեան.

Ա Ն Ջ Ի Ն Ք

Աննա,	}	Հարուստ ծնողների երեխաներ. 10 տարեկան:
Մարիամ,		
Սարենիկ, 8 տարեկան մի աղքատ աղջիկ:		

30

Գործողութիւնը կատարուում է Զատից մի քանի օր առաջ:



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան «Նաղեժդա» Տեսարանի փող. № 7.

1 9 1 3

12221
211

Տեսարանը նեկայացնում է մի փողոցի աջ կողմի գեղեցիկ տներինց մեկը, ուր անա կողմից մի բանի բայ դռներ ունի: Տա՛ն ներսը մեծ բակ:

1) ԱՆՆԱ ԵՒ ՄԱՐԻԱՄ

(Դուրս եկ գալիս տան աջ կողմից անբան զգեստով եւ ծածկած մուշտակով):

ԱՆՆԱ.—(Դեպի ներս): Շատ լաւ, սիրելի մայրիկ, անհող կաց, որովհետեւ մենք չենք մրսի. բայցի դրանից դրսում երկար չենք մնայ ու կաշխատենք շուտ վերադառնալ (Փակում է դուռը):

ՄԱՐԻԱՄ.—Չէ՞ որ մենք էլ մեծ ու խելօք աղջիկներ ենք:

ԱՆՆԱ.—Իհարկէ, շատ ձիշտ ես աւուս:

ՄԱՐԻԱՄ.—Աննա, քեռիդ մի անգամ էլ իր շնորհքը ցոյց տուց: Առաջները նա անտանելի էր, որովհետեւ մեծ միտք էր պահում և բացի դրանից, անցեալ կիրակի, կարծեմ դու էլ գիտես, երբ Տիգրան եղբայրդ Լեոնի հետ սաստիկ աղմուկ էր բարձրացրել...

ԱՆՆԱ.—Այո, միշտ անկիրթ երեխաները աղմուկ են բարձրացնում:

ՄԱՐԻԱՄ.—Իհարկէ. բայց մենք հանգիստ էինք, այնպէս չէ՞: Մենք հանգիստ կերպով մեր հեքեաթն էինք կարդում:

ԱՆՆԱ.—Այդպէս էլ պէտք է լինէր. չէ՞ որ մենք արդէն մեծ աղջիկներ ենք:

ՄԱՐԻԱՄ.—Բայց քեռին նրանց վերաբերմամբ այսպէս ասաց. «Այս անպիտանները այնպիսի աղմուկ են բարձրացնում, որ կարծես հոթենթոթներ լինին, իսկ աղմուկները Տիգրանը և Լեոնն էին»:

ԱՆՆԱ.—Ոչինչ, քեռին հօ այդ չար մտքով չի ասել. նա շատ բարի մարդ է և նոյն իսկ ինձ առանձնապէս իր հարսանիքին է հրաիրել:

ՄԱՐԻԱՄ.—(Զարմացած): Ի՞նչ ես ասում: Ձիշտն ասած, Աննա, ես նախանձում եմ քեզ, երանի քեզ, որ նրա

հարսանիքին քաղցրաւենիք պէտք է ուտես:

ԱՆՆԱ.—Ես ինքս էլ շատ ուրախ եմ: Բայց Մարիամ, դուցէ քեռիս քեզ էլ իր հարսանիքին հրաիրէ:

ՄԱՐԻԱՄ.—(Ողբարար): Ինչ լաւ բան կը լինի: Աննա, արի դու քեռուդ այնպէս հասկացրու, իբր թէ ես նրա մասին շատ լաւ կարծիք ունեմ և նոյն իսկ նրան իմ քեռուց աւելի լաւ մարդ եմ համարում: Ձիշտն ասած, մեր քեռին մեզ միշտ 10 կողակ է տալիս շուկուղ գնելու և այն էլ միշտ այս խօսքերն է ասում. «Ըզոյշ կացէք, որ ձեր ստամոքսը չըփչանայ և բոլորը միանգամից չուտէք: Ի՞նչ ստամոքս, ի՞նչ բան: Հօ մէկ դիւթին շոկուղ կարող եմ միանգամից ուտել՝ առանց իմ ստամոքսը վնասելու. իսկ ընդհակառակը, քո քեռին կարգին մարդ է, նա մեզանից իւրաքանչիւրին 50-ական կողակ տոււց: Մենք դրանով ինչ որ մեր սիրտն ուզում է՝ կարող ենք գնել»:

ԱՆՆԱ.—Այո, բայց իսկապէս ի՞նչ գնենք այդ փողով: Կարծեմ մի տիկնիկ, որի համար էլ կարող ենք հագուստներ պատրաստել:

ՄԱՐԻԱՄ.—Ո՛չ, այդ լաւ չէ. 50 կողակը բաւական փող է և կարելի է դրանով ուրիշ լաւ բաներ գնել: Ի՞նչ պէտք է լինի 50 կողականոց տիկնիկը. ա՛յ, անցեալ տարի մեր աղախինը իր փոքրիկ քրոջ համար մի այդպիսի տիկնիկ գնաց, և հէնց որ ձեռք տւի՝ խեղձ տիկնիկը արդէն իր մի ոտը կորցրեց. չնայելով որ շատ մեղմ կերպով բռնեցի նրա ոտքը և բոլորովին չսեղմեցի:

ԱՆՆԱ.—Այո, գիտեմ, և շատ լաւ էլ յիշում եմ: Բայց յետոյ մայրիկդ ձեր աղախինին երկրորդ անգամ փող

ընծայեց և նա այս անգամ իր քրոջ համար տաք գուլպաներ գնաց, իսկ մենք էլ տիկնիկի ոտը պինդ կապեցինք, նրա փոքրիկ քրոջ ուրախութիւնն էլ կրկնապատկեց, որովհետեւ նա թէ տաք գուլպաներ ստացաւ և թէ տիկնիկ:

ՄԱՐԻԱՄ.—Տիկնիկի ոտը շատ էր շարժուում, բայց երբ նրան զգեստ հագցրինք, ոտի շարժումը այլևս չէր երևում:

ԱՆՆԱ.—Ուզում ես մի գրչաման գնենք:

ՄԱՐԻԱՄ.—Ո՛չ, այդ աւելորդ է, որովհետեւ մօրաքոյր Ձիփիւղը ամեն լարեկներդանին ինձ դրանից մի հատ ընծայ է տալիս:

ԱՆՆԱ.—Կամ մի հեշտաւա:

ՄԱՐԻԱՄ.—Բայց ինչո՞ւ համար: Մայրիկը տանել չի կարողանում այն՝ երբ մենք ուզում ենք իսկական կրակով եփել. և ամեն անգամ դրա համար նկատողութիւն ենք լուում: Այդ բանը ես չեմ սիրում, աւելի լաւ է գանազան տեսակ քաղցրաւենիներ և շոկուղ գնել:

ԱՆՆԱ.—(Նախատելով), Բայց Մարիամ, չէ՞ որ մենք նոր կերանք այնքան քաղցրաւենիներ: Տատս ինձ միշտ այսպէս էր ասում. «Քաղցրաւենին առհասարակ դուր է դալիս այն ժամանակ, երբ մարդ քիչ է ուտում, իսկ յետոյ...»

ՄԱՐԻԱՄ.—Բայց չէ՞ որ տատդ էլ հիւանդ ստամոքս ունի: Ես կասկածում էլ եմ: Մենք պէտք է մինչև տուն վերադառնալը բոլորը ուտենք, հակառակ դէպքում պէտք է եղբայրներին էլ բաժին հանենք, իսկ ես ուզում եմ 50 կողակս միայն ինձ համար պահել և բոլորն էլ ինքս ուտել:

ԱՆՆԱ.—Ինձ բոլորովին դուր չի դալիս, երբ առանց եղբայրներին բաժին տալու՝ բոլորը մենակ եմ ուտում:

ՄԱՐԻԱՄ.—Ա՛խ, եթէ ես կարողա-

նայի իմանալ. թէ ինչ գնեմ, որ լաւ լինի. (Անհանգիստ շարժումներ է անում): Ի՛հէ, ասա ինձ մի լաւ բան ու գնանք, բաւական ցուրտ է. բաւական է, որքան կանգնեցինք այստեղ:

ԱՆՆԱ.—Ա՛հ, վերջապէս դտայ: ՄԱՐԻԱՄ.—Ի՞նչ:

ԱՆՆԱ.—Արի գնանք և պտտենք բոլոր գեղեցիկ խանութները:

ՄԱՐԻԱՄ.—Այդ առանց քո գտնելու էլ պէտք է անէինք:

ԱՆՆԱ.—Ուզում եմ, կարող ենք նաև ոչինչ չգնել և փողը անտեսել:

ՄԱՐԻԱՄ.—Տեսեսէ: Բայց չէ՞ որ քեռիդ քեզ ասաց, որ այդ փողով մենք մի ուրախութիւն սարքենք մեզ համար, իսկ անտեսելու մէջ ի՞նչ ուրախութիւն ես գտնում:

ԱՆՆԱ.—Է՛հ, ես այլևս ոչինչ չգիտեմ:

ՄԱՐԻԱՄ.—Բանից դուրս է դալիս, որ ես քեզանից աւելի լաւ բաներ եմ մտածում:

ԱՆՆԱ.—(Վիրաւորաւ): Այդ բանը դու չեմ կարող ասել:

ՄԱՐԻԱՄ.—Այն էլ ի՞նչպէս:

ԱՆՆԱ.—Անպիտան ես, Մարիամ:

ՄԱՐԻԱՄ.—Խնդրեմ ինձ անպիտան չասես, ապա թէ ոչ ես կը բարկանամ:

ԱՆՆԱ.—Իսկ ես ինչպէս կը բարկանամ: (Միմեանցից երես եկ դարձնում):

ՄԱՐԻԱՄ.—Ինչ էլ որ լինի, ես մի լաւ բան գիտեմ:

ԱՆՆԱ.—Ի՞նչ:

ՄԱՐԻԱՄ.—Գնանք մենք այս փողոցի ամբողջ երկարութեամբ, իւրաքանչիւրս մի կողմ գնանք և եթէ լաւ խանութների պատահենք՝ փոխենք մեր տեղերը և յետոյ կըտեսնենք:

ԱՆՆԱ.—Ա՞յդ էր լաւ բանը:

ՄԱՐԻԱՄ.—Յետոյ գնենք այնպիսի բաներ, որոնք մեզ ամենից շատ դուր կգան և նորից մենք իրար կը պատահենք ձեր տան առաջ, այն ժամանակ կերևայ՝ թէ մեզանից որն է լաւ բան

գնել: Բայց մենք կարող ենք քեռուղ
և մայրիկիդ էլ հարցնել...

ԱՆՆԱ.—Լաւ կլինէր, եթէ մենք մի-
ասին գնայինք:

ՄԱՐԻԱՄ.—Այդ մենք կարող ենք
վազն էլ անել:

ԱՆՆԱ.—Լաւ:

ՄԱՐԻԱՄ.—Ուրեմն գնանք: (Ձա-
խից գնում են)

2. ՍԱԹԵՆԻԿ

(Ձախ կողմից. բարակ եւ աղքատ
հագնւած եւ գատկական արհեստական
գառնուկներով լցրած մի արկղ ձեռքին,
դողդողում է):

Ձատկական գառնուկներ եւ ծա-
խում: Այլ լաւ գառնուկներ: Գնեցէք
զատկական գառնուկներ: Ոչ ոք չէ
մօտենում: Ամենքն էլ ուրախ դէմքե-
րով մօտովս անցնում են, բայց նրան-
ցից ոչ ոք չէ գում իմ փոքրիկ և գե-
ղեցիկ գառնուկներից, որ մայրիկը
այնպէս լաւ պատրաստել և կանաչ
ժապաւէնով զարդարել է: Այո, մայ-
րիկս իրաւունք ունէր. երբ կարծում
էր, որ հարուստ մարդիկ սովորաբար
քաղցի մասին գաղափար չունեն և
բողբոլին ուշադրութիւն էլ չեն դար-
ձնում, թէ ինչպէս եւ մրսում և սար-
սփիւի յոգնած եմ: (Նստում է տան
սանդուխի վրայ): Ա՛խ, ինչպէս յոգ-
նած եմ: (Գլուխը յետում է պատին):
Այո, առաջ, երբ հայրիկս դեռ կենդանի
էր, ես էլ էինստում տաք սենեակում,
հայրիկս ինձ համար քաղցրաւենիք և
զատկական խաղալիքներ էր բերում:
Այո, այն ժամանակ ես էլ ուրախ էի:
Յետոյ հայրիկս գործադրացաւ գործա-
րանում և մեռաւ, իսկ ես մայրիկս
հետ միայնակ մնացի: Ա՛խ գոնէ եթէ
մայրիկը առողջ լինէր, բայց նա այն-
պէս հազում է և այն էլ շատ վատ:
Երանի թէ մօտովս անցուղարձ անող
մարդկանցից մէկը բարի լինէր զատ-
կական գառնուկներս գնելու, այն

ժամանակ ես մայրիկս համար տաք
ապուր կը սրտորաստէի, հակառակ
դէպքում, այդ բանը անկարելի է, որով-
հետեւ տանը բողբոլին փող չկայ:
Ա՛խ իմ խեղճ և սիրելի մայրիկ.
(Լայխս է.): Ձատկական գառնուկներ
գնեցէք: (Գողում է և գլուխը ներս է
մտցնում դեպի տան ներսը):

3. ԱՆՆԱ ԵՒ ՍԱԹԵՆԻԿ

ԱՆՆԱ.—(Ներս է մտնում ձախ կող-
մից, ջնկատելով Սաթենիկին), Ես չկա-
րողացայ ոչ մի բան գտել: Բայց
խկապէս յիմարութիւն էր իմ կող-
մից և Մարիամն էլ իրաւունք ունէր:
Ինչ էլ որ տեսնում եմ խանութներում,
ես նրա լաւ տեսակից տանը արդէն
ունեմ. հետեւաբար այդպիսի իրեր գը-
նելը ինձ ոչ մի ուրախութիւն չի
պատճառում: Ոչինչ, թող Մարիամը
ինձ յիմար անւանի:

ՍԱԹԵՆԻԿ.—Գնեցէք զատկական
գառնուկներ:

ԱՆՆԱ.—(Նկատելով Սաթենիկին):
Ձատկական գառնուկներ. (մօտենում
է Սաթենիկին), Ա՛խ, իսկապէս որքան
գեղեցիկ են դրանք:

ՍԱԹԵՆԻԿ.—Խնդրում եմ գնեցէք
այս գառնուկներից, որովհետեւ ես բո-
լորովին յոգնել եմ և բացի դրանից
շատ ցուրտ է...

ԱՆՆԱ.—(Բռնելով Սաթենիկի ձեռքից):
Խեղճ փոքրիկ աղջիկ, որքան դու մըր-
սում ես և տաք հագուստ էլ չունես:
Իսկոյն գնայ տուն, տաք թէյ խմիր և
պառկիր անկողնում:

ՍԱԹԵՆԻԿ.—(Լաց լինելով): Բայց ես
չեմ կարող տուն գնալ, մինչև այս
զատկական գառնուկները չծախեմ:
Բացի դրանից, մենք տաք թէյ չու-
նենք: Տանը ոչ փող ունենք և ոչ էլ
փայտ, իսկ մայրիկս էլ հիւսնդ է:
Բայց եթէ դուք զատկական գառնուկ-
ներ գնեք...

ԱՆՆԱ.—Իսկոյն տալիս է նրան իր

50 կոպեկանոց): Բաւական չէ 50 կո-
պէկը:

ՍԱԹԵՆԻԿ.—(Սարսափած): Ամբողջ
50 կոպէկ:

ԱՆՆԱ.—Դրանից աւել չունեմ,
խեղճ փոքրիկ աղջիկ, բայց ես կասեմ
ձնողներին, նրանք քեզ սիրով ուրիշ
փող էլ կտան:

ՍԱԹԵՆԻԿ.—(տեղից վեր է կենում):
Այսքանն էլ շատ-շատ է:

ԱՆՆԱ.—Ուրեմն պահիր այդ փողը
հիւսնդ մայրիկիդ համար և ասա
նրան, որ այդ ես եմ ուղարկել: Բայց
ասա խնդրեմ, անուշդ ի՞նչ է:

ՍԱԹԵՆԻԿ.—Սաթենիկ Վահանեան:
Գիտէ՞ք, առաջ մեր դրութիւնն էլ լաւ
էր, բայց երբ հայրիկս գործարանում
գործադրացաւ և մեռաւ...

ԱՆՆԱ.—Ուրեմն դու հայր չունես:

ՍԱԹԵՆԻԿ.—Ո՛չ, մի տարի է ար-
դէն, որ նա մեռել է:

ԱՆՆԱ.—Ես ցանկանում եմ ձնողնե-
րիս պատմել, սպասիր այստեղ, Սա-
թենիկ:

ՍԱԹԵՆԻԿ.—Ուրեմն ես կարճ եմ
այս 50 կոպէկը պահել:

ԱՆՆԱ.—Գառնուկներն էլ քեզ: Ա՛խ,
որքան ես ուրախ եմ, որ 50 կոպէկը
խելացի կերպով գործադրեցի: Սպա-
սիր այստեղ, ես իսկոյն կը վերադառ-
նամ: (գնում է տուն):

ՍԱԹԵՆԻԿ.—(Նրա ետեւից): Շնոր-
հակալ եմ, շատ և շատ շնորհակալ:
Միանգամից 50 կոպէկ: (Քննում է
փողը): Ի՞նչ պէտք է ասի մայրիկս:
Նա որքան կուրախանայ: Շատ կամաց
ներս կը մտնեմ տուն, բայց ամենից
առաջ կը գնեմ սուրճ, հաց և մի քիչ
էլ փայտ և երբ մայրիկս ձեռքիս կը
տեսնի զատկական գառնուկները, այն
ժամանակ ես ամեն ինչ կը պատմեմ
նրան:

4) ՄԱՐԻԱՄ ԵՒ ՍԱԹԵՆԻԿ

ՄԱՐԻԱՄ.—(Ներս է մտնում ձախ
կողմից, քաղցրաւենիք ուտելով, որից

մի կապոց ունի ձեռքին): Ի՞նչ համեղ
է: Ամենից լաւն էլ այս էր, ինչ որ
կարող էի գնել: Սրանից Աննայի բա-
ժինն էլ կպահեմ: Մի շոկուղդ էլ ու-
տեմ: (Բաց է անում կապոցը եւ ու-
տում): Ի՞նչ հրաշալի է:

ՍԱԹԵՆԻԿ.—Գնեցէք զատկական
գառնուկներ:

ՄԱՐԻԱՄ.—(մօտենալով նրան):
Դեռ հինգ կոպէկ ունեմ: (Սաթենիկին):
Ո՞րքան արժէ գառնուկը:

ՍԱԹԵՆԻԿ.—Հատը 5 կոպէկ:

ՄԱՐԻԱՄ.—Բայց մէկ հատ չեմ
կարող գնել, եթէ երկուսը 5 կոպէկով
տաս...

ՍԱԹԵՆԻԿ.—Մայրս ասել է... (տա-
տանում է): Լաւ, վերցրեք երկուսը:
(Երկու գառնուկ է տալիս նրան):

5.) ԱՆՆԱ, ՄԱՐԻԱՄ ԵՒ ՍԱԹԵՆԻԿ

ԱՆՆԱ.—(շտապ դուրս է գալիս
տանից ուրախ): Սաթենիկ, Սաթենիկ,
ՄԱՐԻԱՄ.—(Աննային). Դու արդէն
վերադարձել ես:

ԱՆՆԱ.—Այո և գիտե՞ս Մարիամ, թէ
եւ ինչ խելացի կերպով եմ գործա-
դրել փողս:

ՄԱՐԻԱՄ.—Ասա տեսնեմ ի՞նչ ես
արել:

ԱՆՆԱ.—(Սաթենիկին): Սաթենիկ,
գնանք վերև ձնողներին մօտ. դու
տաք թէյ, հաց և բացի դրանից
տաք իրեր կստանաս մայրիկիցս,
և կպատմես ձնողներիդ մասին
Հայրիկս էլ ճանաչեց հօրդ, նա մեր
գործարանումն է աշխատել և յետոյ
վնասուել իր անզգուշութեան շնոր-
հիւ: Բայց եթէ քո հայրդ հայրի-
կիս ասած լինէր, դուք այդպիսի դրու-
թեան մէջ չէիր ընկնի: Հայրիկս ձեր
ետեւից շատ է ման եկել, բայց ձեզ չի
գտել:

ՍԱԹԵՆԻԿ.—Հօրս մահից յետոյ
մենք գնացինք մայրիկենց գիւղը և ո-
րովհետեւ այնտեղ ոչ մի աշխատանք
չկար, դրա համար էլ ստիպւած ե-

զանք կրկին լերագառնալ այս մեծ քաղաքը:

ՄԱՐԻԱՄ.— (Աննալին): Ի՞նչ է նըշանակում այս խօսակցութիւնը:

ԱՆՆԱ.— Ա՛յ, պատմեմ քեզ, Մարիամ, դէպքը այսպէս պատահեց: Երբ ես փողոցի ամբողջ երկարութեամբ գնացի և դիտում էի խանութները, չկարողացայ մի յարմար բան գտնել և գնել: Այնուհետև որոշեցի 50 կոպէկս տնտեսել և քո կարծիքով յիմար դառնալ: Վերագարձայ այստեղ, պատահեցի այս խեղճ Սաթենիկին, որ բոլորովին զողբում էր, ամբողջ փողս ընծայեցի սրան և նայն իսկ գնացի ծնողներիցս Սաթենիկի համար մի ուրիշ բան խնդրելու, և այժմ այնքան երջանիկ եմ, սիրելի Մարիամ, որ ոչ մի բան չէր կարող ինձ այդքան ուրախութիւն պատճառել: Ա՛խ դու գիտես, թէ ծնողներս որքան բարի եղան: Հայրս ինձ ասաց. «Ի՞նչ ամենալաւ բանը ընտրեցիր, իսկ քեռիս ասաց, «գիտանայ, դու մի երջանիկ հայր ես», իսկ մայրիկս ուրախութիւնից ինձ գրկեց:

ՍԱԹԵՆԻԿ.— Ա՛խ, եթէ կարողանայի ասել, թէ որքան երջանիկ եմ ես, Կարծէք ինձ նման նախանձելի արարած չկայ այժմ:

ՄԱՐԻԱՄ.— (Գառնուկները դնում է Սարենիկի արկղում): Ահա քեզ իմ գառ-

նուկները: (Քաղցրաւ եկիք տայով նրան): Այս էլ պահիր քեզ համար, որովհետև դա ինձ այլևս դուր չի գալիս:

ՍԱԹԵՆԻԿ.— Ա՛յս էլ պահեմ:

ԱՆՆԱ.— (Սարենիկին): Մարիամը սիրով է տալիս քեզ այդ:

ՄԱՐԻԱՄ.— Ա՛յո, ճիշտ է:

ՍԱԹԵՆԻԿ.— Բայց այս շատ եղաւ:

ՄԱՐԻԱՄ.— Ո՛չ Սաթենիկ, պահիր քեզ համար, ապա թէ ոչ կընհզանամ:

ՍԱԹԵՆԻԿ.— Լաւ: Բայց խնդրում եմ, որ ձեզանից իւրաքանչիւրը խեղճ, բայց երջանիկ Սաթենիկից մի մի գառնուկ վերցնի: (Խորաբանջիւրիկ մի մի գառնուկ է տայիս):

ԱՆՆԱ.— Շատ սիրով. ես ամենայն խնամքով կպահեմ իմ գառնուկը, և միշտ քեզ կյիշեմ, Սաթենիկ:

ՄԱՐԻԱՄ.— Ես էլ, Բայց Աննա, եթէ չըլինէին մեր վայրենի երեխաները...

ԱՆՆԱ.— Մենք նրանց կպատմենք, թէ ինչպէս դատակաճ գառնուկը մեր տանը մտաւ, այն ժամանակ նրանք կսիրեն գառնուկին ու նրան չեն վրէժացնի:

ՄԱՐԻԱՄ.— Ճիշտ ես ասում. իսկ այժմ գնա՛ք ծնողներիս մօտ: (Սարենիկի հետ միասին տուն են գնում):

ՎԱՐԱԳՈՅՐ



$[1n + 4n]$

9 U. P.

№ 12270